ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ «ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕՐ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

26-28 հուլիսի 2021թ.

Հարգելի՛ գործընկերներ,

Սիրելի՛ բարեկամներ,

Շատ ուրախ եմ ձեզ ողջույնի խոսքով դիմելու և «Նորարարության օր» ամենամյա համաժողովին բարի երթ մաղթելու այս հնարավորության համար։

Առաջին հերթին ցանկանում եմ խորին երախտագիտություն հայտնել այս կարևոր իրադարձության բոլոր կազմակերպիչներին՝ Հայ-Շվեյցարական առևտրի պալատին, Հայաստանի «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամին, ինչպես նաև Հայաստանում Շվեյցարիայի դեսպանության մեր գործընկերներին։

Անկասկած Շվեյցարիան նորարարության և ամենաարդիական մոտեցումների կիրառման համաշխարհային առաջատարներից մեկն է։ Շատ կարևոր է, որ այս ձեռնարկով համադրվում են աշխարհի լավագույն փորձին ծանոթանալու և Հայաստանի փոքր և միջին ձեռնարկությունները Շվեյցարիային, Եվրոպային և գլոբալ այլ շուկաներին ներկայացնելու հնարավորությունները։

Այս համատեքստում ուրախությամբ պիտի առանձնացնեմ նաև «Polixis» և «Azad Pharma» ընկերությունների մասնակցությունը և օժանդակությունն այս համաժողովի կազմակերպման գործին։ Նրանց ցուցաբերած աջակցության շնորհիվ այս համաժողովը դառնում է ոչ միայն հայ-շվեյցարական համագործակցության կարևոր դրսևորում, այլև պետական և մասնավոր հատվածների փոխգործակցության մի փայլուն օրինակ։

Այն նաև գալիս է ապացուցելու, որ երկկողմ հարաբերությունները կարող են ունենալ և ստանալ բազմաթիվ խթանող ազդակներ։ Այդ շարքում պետական հատվածը կարող է ունենալ առաջատար, սակայն բնավ ոչ մենաշնորհային դերակատարում։

Անչափ կարևոր են գործարար շրջանակների շփումները, քաղաքացիական հասարակության կառույցների համագործակցությունը, տեղական ինքնակառավարման մարմինների կապերն ու փորձի փոխանակումը, ինչպես նաև մարդկանց միջև ուղիղ շփումները։ Այս բոլոր հարթություններում էլ կա բավականին մեծ չօգտագործված ներուժ, որն անհրաժեշտ է բացահայտել, զարգացնել և խրախուսել։

Մենք արդեն իսկ ունենք հայ-շվեյցարական համագործակցության մի շարք հաջողության պատմություններ, օրինակ՝ դեղագործության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ժամագործության, գինեգործության և այլ ոլորտներում: Նրանց հաջողությամբ մենք պետք է ոչ միայն ուրախանանք, այլև պետք է փայփայենք ու խրախուսենք դրանք:

Հարգելի՛ բարեկամներ,

Նորարության ոլորտում Շվեյցարիայի կուտակած լավագույն փորձը և փոքր ու միջին ձեռնարկատիրությունը պաշտպանելու ու խրախուսելու արդյունավետ քաղաքականությունը կարող են խիստ օգտակար լինել Հայաստանի համար: ՓՄՁ-ները, կարելի է ասել, շվեյցարական տնտեսության ողնաշարն են: Մերկապարանոց չլինելու համար կարելի է նշել միայն, որ Շվեյցարիայում եղած աշխատատեղերի երկու երրորդն ապահովում են հենց ՓՄՁ-ները՝ էական ներդրում կատարելով ազգային բարեկեցության և տնտեսական աճի ապահովման գործում:

Վստահ եմ, որ նորարարության խթանումն ու ՓՄՁ-ների պաշտպանության ու զարգացման քաղաքականությունը այն ռազմավարական զարգացման ուղիներն են, որոնք թույլ կտան ամրապնդել մեր դիմադրողականությունը և ճկունությունը հարափոփոխ աշխարհի և գլոբալ շուկաների կրկնվող ցնցումների պայմաններում: Համոզված եմ, որ այս ճանապարհին Շվեյցարիան կլինի մեր վստահելի գործընկերներից և աջակիցներից մեկը և ներկա ձեռնարկը դրա լավագույն օրինակն է:

Կրկին հաջողություն եմ մաղթում «Նորարարության օր» համաժողովի բոլոր մասնակիցներին և մաղթում եմ բողուն ու արգասաբեր քննարկումներ:

Շնորհակալություն: